

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՐՈՂԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀՐՈՒՋՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Ա. Ալեքսանյան, Գ. Ա. Հակոբյան

Հողագիտության հիմնադիր Վ. Վ. Դոկուչևեր հողերի պրոֆիլի վրա առաջին անգամ գտնել է ներքին հորիզոններ՝ A, B, C, որոնք գենետիկորեն, այսինքն ըստ իրենց ծագման կազմված են իրար ինտ: A-հորիզոնը հողի վերին մուգ կամ սև ներկված շերտն է, միատար, որը համեմատաբար խորատեղի է համարվում և գույնով տարբերվում է ներքին շերտից: B-հորիզոնը՝ A-հորիզոնի շարունակությունն է և տարբերվում է A-ից ավելի բաց գույնով, հումուսի քիչ պարունակությամբ, աղբյուրային կառուցվածքով և ուրիշ մորֆոլոգիական հատկանիշներով:

B-հորիզոնից ներքև՝ համարել է անցողիկ հորիզոն ու նշել C-տառով /մայրական ապառ/:

Նույնպես Դոկուչևեի ուսմունքի շարունակողները երկրագնդի տարբեր հողային գոտիներում ուսումնասիրել են հողային պրոֆիլներն ու գտնել հետևյալ հորիզոնները՝ A0, A1, A2, B1, B2, C1, C2 և այլն:

Պրոֆ. Ս. Ա. Զավաբաշվը, որն ուսումնասիրել է նաև Անդրկովկասի հողային տիպերը, հողի պրոֆիլի վրա գտնել է չորս գենետիկական հորիզոններ՝ A, B, C, D:

Առաջին վերին հորիզոնը, որտեղ տեղի է ունենում բուսական մնացորդների տարալուծման և հումուսի կուտակման պրոցեսը, նա անվանել է ակումուլյատիվ կամ հումուսային հորիզոն:

Այդ հորիզոնը նա նույնպես նշանակել է A-տառով:

Երկրորդ գենետիկական հորիզոնը, որտեղ հումուսը քանակապես զիջում է A-հորիզոնին և քիչ ինտենսիվությամբ բաց գույն նշանակել է B-տառով: Երրորդ հորիզոնը, որտեղ մեծ թանկությամբ հանքային նյութեր և կարբոնատներ են պարունակում Զավաբաշվը նշանակել է C-տառով: Չորրորդ հորիզոնին անվանել է քիչաքանակ կամ մայրական ապառ ու նշանակել D-տառով: Մեր կողմից բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն հողերը, որոնք առաջացել են տեղում և կազմված չեն բերվածքների հետ, անշուշտ ունեն պարզ անցողիկ հորիզոններ, այդ թվում B- ից դեպի C- հորիզոնը: Այդ հորիզոնի մեջ պարունակվում է որոշ քանակությամբ օրգանական նյութեր, բույսերի առանձին արմատներ, որոնք թափանցում են ներքին հորիզոններ ցուր ու հանքային տարրեր վերցնելու համար: Այստեղ քիչ չեն նաև մայրական ապառների պարունակությունը: Ստացվում է խառը, խաչաբաղն շերտ /հորիզոն/ /նկ.1/, որին չի կարելի անվանել B կամ C հորիզոններ: Շատ նպատակահարմար է գտնել այդ հորիզոնը BC-տառով /նկ.2/: Սակայն շատ հողագետներ ճիշտ չեն գտնում նման խառը հորիզոնները և նշանակում են C-տառով: Գետերի հովիտների, լեռների ստորոտների ալյուվիալ, դելյուվիալ, պրոլուվիալ և այլ ժամապարհներով առաջացած հողերը չունեն գենետիկական հորիզոններ, նման հողերի պրոֆիլի պարագլման ժամանակվան անհրաժեշտ է գտնել շերտերով՝ I, II, III, IV և այլն:

Մյուս դիտողությամբ, որ ցանկանում ենք նշել, դա նա է, որ լեռնային շրջաններում, որտեղ տարբեր խորությունների վրա գտնվում են մայրական տարրեր ապառների՝ ցանկալի է կիրառել պրոֆ. Զավաբաշվի կողմից գտնված D-տառը միայն հետևյալ ձևով: Եթե մայրական ապառը որոնք ներկայացնում է փափուկ մասսա՝ կավ, լոս, ավազ և այլն, նշանակել C-տառով, իսկ եթե

այն համատարած պինդ ապարներ են /քարեր/ նշանակել D-տառով, որպեսզի իմացվի տեղամասի մայրական ապարի վիճակն ու խորությունը:

Յանկալի է նման հողերը բոնիտան ժամանակ նշել ոչ միայն հումուսային հզորությունը, այլ նաև մայրական ապարի տեսակն ու խորությունը, որովհետև արևմտաշխատանքներում դա շատ անհրաժեշտ է իմանալ:

Յանկալի է նաև հողերի պրոֆիլի նկարագրման ու գատման ժամանակ առաջնորդ պրոֆեսոր Ի.Ֆ.Գոլուբովի «Հողերի գունավորման շկալա» ձեռնարկով /1962/, որը լայն ճանաչվել է գտել գրերն բոլոր երկրներում:

Գրականություն

1. Վ.Վ.Դոկուչևս, «Հստիք աշխատություններ» հրատարակություն Գ.Ա. ԽՍՀՄ-1949:
2. Մ.Ա.Զախարով, «Հողագիտության դասընթաց I բաժին», Մ.Դ., 1927:
3. Խ.Պ.Միրիմանյան, «Հողագիտության հիմունքներ», «Լույս հրատարակչություն», Երևան, 1971:

Резюме

Многолетние исследования почвенных генетических горизонтов в разных зонах позволяют нам сделать следующие выводы.

Первое: Почвы, которые образовались на местах на почвенном профиле имеют хорошо выраженные генетические горизонты.

Многие почвоведы резко выделяют переход от «В» к «С» по почвенные анализы показывают что этот переходный горизонт смешан органическими остатками и материнскими породами, поэтому целесообразно назвать его «ВС».

Второе: В горных зонах, где материнская порода мягкая /глина, лес, песок и пр./ целесообразно обозначить ее «С», а где сплошная твердая /камень/ - назвать «D».

Это имеет большое производственное значение.